

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին**

**Վարկային և դրամաշնորհային ծրագրերի վարչության վերլուծության և մոնիթորինգի բաժնի ավագ մասնագետ (ծածկագիր՝ 22- 33.7-Մ4-1)**

Հիմնական գործառույթները՝

- 1) Մասնակցում է Վարչության համակարգմամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի (այսուհետ՝ Ծրագրեր)՝ տարեկան աշխատանքների ժամանակացույցերի և ծախսերի նախահաշիվների մասով վերլուծության և մոնիթորինգի իրականացման աշխատանքներին.
- 2) մասնակցում է Ծրագրերի շրջանակներում տնտեսված միջոցների օգտագործման, ինչպես նաև միջոցների վերաբաշխման վերաբերյալ վերլուծության և մոնիթորինգի արդյունքում առաջարկությունների մշակման աշխատանքներին.
- 3) իրականացնում է Ծրագրերի իրականացման վերաբերյալ ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվությունների քննարկման, վերլուծության, ամփոփ հաշվետվությունների կազմման, հաշվետվությունների վարման և սահմանված ժամկետներում ներկայացման աշխատանքները.
- 4) մասնակցում է Ծրագրերի հաստատված տարեկան աշխատանքների ժամանակացույցից և ծախսերի նախահաշիվներից շեղումների վերացման վերաբերյալ վերլուծության և մոնիթորինգի արդյունքում առաջարկությունների մշակման աշխատանքներին.
- 5) իրականացնում է Նախարարության վարկային և դրամաշնորհային ծրագրերի կառավարման խորհրդի նիստերի նախապատրաստման և կազմակերպման՝ նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերի նախապատրաստման և Խորհրդի անդամներին տրամադրման, խորհրդի աշխատանքների հետ կապված գործավարչության վարման աշխատանքները.
- 6) մասնակցում է Ծրագրերի ավարտից հետո ծրագրերի արդյունքների գնահատման և ծրագրերի մշակման փուլում նախանշված արդյունքների հետ համեմատման և վերլուծման աշխատանքներին.
- 7) մասնակցում է Ծրագրերի ՀՀ տարեկան պետական բյուջեի և միջնաժամկետ ծախսային ծրագրերի նախագծերի վերաբերյալ վերլուծության և մոնիթորինգի իրականացմանը:

**Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար նաև պահանջվում է՝**

- բարձրագույն կրթություն,
- Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ,

- Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ,

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- Ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը՝ մինչև նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

- Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 19.09.2019թ.

- Աշխատավարձի չափը՝ 150799 (մեկ հարյուր հիսուն հազար յոթ հարյուր ինսունինը) ՀՀ դրամ:

- Աշխատանքի վայրը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 010-511-355, էլ. փոստ՝ [n.kirakosyan@mta.gov.am](mailto:n.kirakosyan@mta.gov.am)

- Ընտրություն կատարելու եղանակն է՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն

### **Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝**

- դիմում Նախարարության գլխավոր քարտուղարի անունով (դիմումը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),

- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/ պատճենները բնօրինակների հետ միասին, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները բնօրինակների հետ միասին,

- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

- մեկ լուսանկար 3+4 սմ չափսի,

- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

**ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:** Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: